ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն և աշխարհագրություն 2, 2015 ***Геология и география***

Աշխարհագրություն

УДК 911.3.52

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԹԵՀՐԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ (ԻԻՀ)

Ա. Հ. ՊՈՏՈՍՅԱՆ *, ՀՈՍԵՅՆ Է. ՔԻԱՍԱՐԻ

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

Հոդվածում վերլուծված են Թեհրան նահանգի բնական, պատմամշակութային և մարդածին զբոսաշրջային օբյեկտները, կախված՝ դրանց բաշխումից և օգտագործումից: Նկարագրված է զբոսաշրջային ռեսուրսների դերը հենակետային զբոսաշրջային տարածքների և դեստինացիաների առաջացման և զարգացման գործում:

***Keywords*:** natural, historical-cultural attractions; human-made attractions.

Թեհրանի նահանգն ընկած է Իրանի հյուսիսարևմտյան մասում, այն զբաղեցնում է 12 981 հզր. *կմ* ^{2} տարածք, 2014 թ. դրությամբ նահանգի բնակչության թիվը կազմել է 12 մլն 425 հազ. մարդ: Վարչականորեն բաղկացած է վեց շրջանից, ունի 16 քաղաքային բնակավայր, 45 ավան և 78 գյուղ:

Նահանգում զբոսաշրջային ինդուստրիայի զարգացմանը կարող են նպաստել այն տարածքները, որոնք իրենց մի շարք առավելությունների շնորհիվ ունեն առաջնային նշանակություն: Զբոսաշրջության զարգացման հենակետային տարածքներն ընտրվել են հիմնվելով մշակութային հուշարձանների և բնական տեսարժան վայրերի և քաղաքներում կամ գյուղական բնակավայրերում զբոսաշրջության զարգացմանը նպաստող ենթակառուցվածքների առկայության վրա: Այդ առումով առաջնային խնդիր է համարվում առկա զբոսաշրջային-ռեկրեացիոն ռեսուրսների կադաստրի իրականացումը, որում տրվում է, և՛ առկա ռեսուրսի համալիր նկարագիրն և տեղադրվածությունն, և՛ արժևորվում է այդ ռեսուրսն ըստ պահանջարկի և նշանակության, քանի որ զբոսաշրջությունը և ռեկրեացիան համարվում են այնպիսի գործունեություններ, որոնք բացի տնտեսական զարգացում ապահովելուց, ունեն նաև ռեսուրսի տեղական, տարածաշրջանային, ազգային և միջազգային նպատակներով օգտագործելու և արժևորման անհրաժեշտություն:

Նահանգի զբոսաշրջային և ռեկրեացիոն հենակետային տարածքների առանձնացման նպատակով առկա ռեսուրսների արժևորումը իրականացվել է ըստ ռեսուրսի հատկանիշների, գրավչության տեսակի, օգտագործման նշանակության և մատչելիության: Հաշվի են առնվել նաև սպասարկման ծառայությունների տեսականին և իրականացման որակը: Կատարվել է խորը և համապարփակ ուսումնասիրություն, վիճակագրական տեղեկատվության

* E-mail: aksel.potosyan@yandex.ru

հավաքագրում ու տվյալների մշակում: Կազմվել է նահանգի զբոսաշրջային գրավչությունների ցանկ, որտեղ ընդգրկվել են վարչական միավորների զբոսաշրջային և ռեկրեացիոն կարևոր ռեսուրսները, տրվել է դրանց համալիր բնութագիրն ու օգտագործման հնարավորություններն՝ ըստ նպատակի և նշանակության:

Ուսումնասիրվել է զբոսաշրջային նշանակության 164 օբյեկտ: Նահանգում պատմական հուշակոթողներն շատ ավելի են նշված քանակից, սակայն դրանց որոշ մասը գրավչությունների շարքում չեն դասվել իրենց զբոսաշրջային պակաս նշանակության պատճառով: Մի շարք դամբարանների, ինչպիսին են, օրինակ, Էմամների գերեզմանները, բաժին է ընկնում գրավչությունների ու հուշակոթողների ամենամեծ թիվը: Դրանց ընդգրկումը զբոսաշրջային գրավչությունների շարքում կարող է նույնպես լուրջ խնդիր առաջացնել, քանի որ զբոսաշրջային ընդհանուր ռեսուրսներն իրենց տեսակով դառնում են միատիպ և հետևաբար, ինդուստրիայի զարգացման համար ունենում միօրինակ կողմնորոշում, խոչընդոտելով նրա բազմակողմ զարգացմանը:

Թեհրանի նահանգում զբոսաշրջային ինդուստրիայի համալիր և բազմակողմ զարգացմանը կխթանի զբոսաշրջային հենակետային տարածքների առանձնացումն ըստ դրանցում եղած զբոսաշրջային և ռեկրեացիոն ռեսուրսների բաշխվածության աստիճանի և տարբերակված օգտագործման հնարավորության: Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ որպես հենակետային զբոսաշրջային և ռեկրեացիոն տարածքներ կարելի է դիտարկել Թեհրանի նահանգի վարչական միավորները, որոնք այդ առումով ունեն միմյանցից տարբերվող որոշակի յուրահատկություններ:

Ամբողջական պատկեր ունենալու համար, աշխատանքում քննարկվել են նաև վարչական միավորներում առկա գրավչություններն՝ ըստ իրենց տարածական բաշխվածության, օգտագործման նշանակության և մակարդակի:

Օգտագործման մակարդակի տեսակետից 164 ընդհանուր ճանաչված գրավչություններից 43-ն ունեն միջազգային, 48-ը՝ ազգային, իսկ 73-ը՝ տեղական նշանակություն:

Թեհրանի նահանգում զբոսաշրջային գրավչությունները համաչափորեն չեն բաշխված: Զբոսաշրջային գրավչությունների տարածական բաշխումը տարբեր շրջաններում կախված է բնակլիմայական, երկրաձևաչափական և վարչաքաղաքական իրավիճակի պայմաններից, ինչպես նաև տնտեսական և սանիտարահիգիենիկ պայմաններից, որոնք յուրաքանչյուր շրջանում կամ քաղաքում ունեն իրենց առանձնահատկություններն ու տարբերությունները:

Նահանգում զբոսաշրջային ընդհանուր գրավչությունների բաշխվածությամբ աչքի են ընկնում առավելապես քաղաքային բնակավայրերը: Նահանգի զբոսաշրջային ընդհանուր գրավչությունների 60,3%-ը գտնվում է Թեհրան քաղաքում (աղյ. 1), ինչը բավական մեծ ներուժ է զբոսաշրջային հզոր ինդուստրիայի ձևավորման և զարգացման համար:

Նահանգում առկա զբոսաշրջային նշանակության ամենակարևոր և ազդեցիկ գրավչություններն ունեն միջազգային գործունեության մակարդակ: Թեհրան քաղաքի զբոսաշրջային գրավչությունները ևս առավել հայտնի են իրենց միջազգային նշանակությամբ (նահանգի զբոսաշրջային միջազգային գրավչությունների 86%-ը տեղաբաշխած է Թեհրան քաղաքում): Սա էապես խոչընդոտում է նահանգի մյուս վարչական շրջաններում և քաղաքներում միջազգային զբոսաշրջության զարգացմանը, վարչական շրջաններից

ու քաղաքներից յուրաքանչյուրում տեղակայված են նմանատիպ գրավչությունների միջին հաշվով հինգ տոկոսից պակաս մասը (աղյ. 1):

Աղյուսակ 1

Թեհրանի նահանգի քաղաքներում զբոսաշրջային գրավչությունների բաշխվածությունն՝ ըստ նշանակության [1]

Քաղաքներ	Նշանակությունը						Ընդամենը	
	միջազգային		ազգային		տեղական			
	քանակ	%	քանակ	%	քանակ	%	քանակ	%
Քարաջ	1	2,3	2	4,2	9	12,3	12	7,3
Շահրիար	0	0	1	2,1	4	5,5	5	3,1
Փաքդաշտ	0	0	0	0	5	6,9	5	3,1
Վարամին	2	4,7	0	0	9	12,3	11	6,7
Շեմիրանաթ	2	4,7	3	6,2	6	8,2	11	6,7
Թեհրան	37	86	38	79,2	24	32,9	99	60,3
Ֆիրուզքուհ	0	0	1	2,1	2	2,7	3	1,8
Դամավանդ	1	2,3	3	6,2	14	19,2	18	11,0
ընդամենը	43	100	48	100	73	100	164	100

Թեհրան քաղաքում միջազգային զբոսաշրջային գրավչությունների կենտրոնացման հիմնական պատճառը պայմանավորված է նրա կառավարչական, քաղաքական և տնտեսական նշանակությամբ: Միջազգային զբոսաշրջային գրավչությունների նման քանակով կենտրոնացումը Թեհրանում նպաստում է նաև տարանցիկ զբոսաշրջության զարգացմանը: Այսպիսի կենտրոնացումը, ինքնին, ավելացնում է զբոսաշրջային միջազգային գրավչություններից հատկապես մարդածին նոր գրավչությունների կառուցումը, որոնք էլ նոր տեղակայումների հնարավորություն են ստեղծում: Նշված խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է իրականացնել զբոսաշրջային գործունեության պլանավորման համապատասխան քաղաքականություն:

Նահանգի զբոսաշրջային ազգային նշանակության գրավչությունների մեծ մասը ևս գտնվում են Թեհրանում: Դա բացատրվում է Թեհրանի մայրաքաղաք լինելու հանգամանքով, ինչպես նաև այլ նահանգների բնակչության տարաբնույթ պահանջմունքները Թեհրանում առկա ծառայությունների բավարարմամբ: Նահանգի ազգային նշանակության զբոսաշրջային գրավչությունների ընդհանուր թվի 79,2%-ը կենտրոնացած է Թեհրանում:

Զբոսաշրջային նշանակության ազգային և միջազգային գրավչությունների խիստ կենտրոնացումը Թեհրան քաղաքում սահմանափակում և նվազեցնում է մնացած քաղաքների մրցունակությունը նահանգի մասշտաբով զբոսաշրջության ծավալի ընդարձակման համար: Այդ երևույթը կանխելու համար պետք է բարձրացնել վարչական այլ շրջանների ու քաղաքների զբոսաշրջային գրավչությունների որակը և ստեղծել զբոսաշրջային համապատասխան միջավայր: Քանի որ նահանգի մնացած վարչական շրջաններն առանձնանում են զբոսաշրջային բնական գրավչությունների առավել մեծ բազմազանությամբ և քաղաքաբնակների հանգստի կազմակերպման համար առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում, ապա զբոսաշրջային ինդուստրիայի զարգացումը նահանգի այդ շրջաններում և քաղաքներում պետք է առավելապես հենվի նմանատիպ ռեսուրսների վրա:

Տեղական նշանակության զբոսաշրջային գրավչությունների տեղաբաշխման առումով ևս Թեհրան քաղաքն ամենամեծ ցուցանիշն ունի: Սակայն, ի տարբերություն միջազգային և ազգային նշանակության զբոսաշրջային գրավչությունների համեմատաբար բարձր տեսակարար կշռի, տեղական զբոսաշրջային գրավչությունների բաժինը Թեհրան քաղաքում 32,9% է: Տեղական նշանակության զբոսաշրջային գրավչությունների բաժինը վարչական այլ շրջաններում և քաղաքներում համեմատաբար բարձր է: Միաժամանակ պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ Թեհրանի նահանգի վարչական մնացած շրջաններում և քաղաքներում տեղական գրավչությունների օգտագործումը զբոսաշրջային նպատակներով մեծապես պայմանավորված է նորից Թեհրան քաղաքով, քանի որ այստեղ են տեղաբաշխված նաև զբոսաշրջիկների գիշերակացի հիմնական օբյեկտները և այստեղից դեպի նահանգի վարչական շրջաններ կատարվում են մեկօրյա կամ պակաս տևողությամբ զբոսաշրջային մեծաթիվ երթուղիներ:

Հայտնի է, որ զբոսաշրջային գրավչությունները դասակարգում են ըստ իրենց տարբեր ձևերի ու գործունեության [2]: Այդ դասակարգումներից մեկը զբոսաշրջային գրավչությունների ծագումնաբանական խմբավորումն է: Այս առումով զբոսաշրջային գրավչությունները բաժանվում են երեք խմբի՝ բնական, պատմամշակութային և մարդածին: Նահանգը ռեսուրսների այդ խմբերի բաշխման առումով ունի իր առանձնահատկությունը, որը պայմանավորված է նրա աշխարհագրական դիրքով և տարածքի բնույթով:

Նահանգում ծագումնաբանական առումով առավել մեծ բաժին ունեն մարդածին գրավչությունները, որոնք ունեն, թե՛ ազգային, թե՛ միջազգային գործունեության նշանակություն: Զբոսաշրջային գրավչություններից 46,3%-ը մարդածին են, 37,8%-ը՝ մշակութային, իսկ 15,9%-ը՝ բնական [3]:

Սովորաբար ազգային ու միջազգային գործունեության նշանակություն ունեցող զբոսաշրջային մարդածին գրավչությունների գերակայությունը Թեհրան քաղաքում պայմանավորված է պատմական անցյալով: Դա անառարկելի իրողությունն է և այստեղ զբոսաշրջային ինդուստրիայի զարգացումը շատ քիչ կախվածություն ունի բնական միջավայրի ու տարածքի հետ: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ խելամիտ ծրագրավորման և պանավորման միջոցով կարելի է զբոսաշրջային ինդուստրիան զարգացնել նաև նահանգի այլ տարածքներում և շրջաններում: Վերջինս հնարավորություն կտա բարձրացնել նահանգի մնացած շրջանների ու քաղաքների դերը զբոսաշրջային ինդուստրիայի տարածքային կառուցվածքում, միաժամանակ, թեթևացնելով Թեհրանի աշխատանքային ծանրաբեռնվածությունը և բնակչության թվաքանակը:

Նահանգում բնական տարրերի տարածական ցրվածությունն ու բնական ձգողական տարածքները ստեղծում են բավարար նախադրյալներ և լծակներ, տարբեր շրջաններում զբոսաշրջության ընդհանուր զարգացման համար: Այս ճանապարհով կարելի է մեծացնել նահանգի մնացած վարչական շրջանների բնական գրավչությունների զբոսաշրջային և ռեկրեացիոն արժեքը և դեպի այդ շրջաններ ու տարածքներ կազմակերպել զբոսաշրջային-էքսկուրսիոն տարբեր երթուղիներ: Դա հնարավորություն կտա Թեհրան քաղաքի զբոսաշրջային շուկայի ֆինանսական ավելի մեծ կարողություններ ունեցող զբոսաշրջիկներին հասցնել նահանգի վարչական այլ շրջաններ ու բնակավայրեր, որոնք աչքի են ընկնում զբոսաշրջային բնական գրավչություններով:

Ստորև բերված աղյ. 2-ում տրված է զբոսաշրջային բնական գրավչությունների բաշխվածությունը Թեհրանի նահանգի վարչական միավորներում:

Այսպիսով, կարող ենք նշել, որ Թեհրան քաղաքը թեև չունի բնական գրավչություններ բնաշրջության և էկոզբոսաշրջության զարգացման համար, սակայն իր զբոսաշրջային ընդհանուր ներուժով կարող է էական դեր ունենալ նահանգի տարածքում բնական գրավչությունների արդյունավետ օգտագործման և նահանգի վարչական մյուս շրջաններում բնաշրջության ու էկոզբոսաշրջության զարգացման համար:

Աղյուսակ 2

Թեհրանի նահանգի զբոսաշրջային գրավչությունների բաշխվածությունն՝ ըստ վարչական կենտրոնների և ծագման [4]

Քաղաքներ	Բնական		Մշակութային		Մարդածին	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
Քարաջ	3	11,5	6	9,7	3	4,0
Շահրիար	2	7,7	1	1,6	2	2,6
Փաքդաշտ	0	0	5	8,1	0	0
Վարամին	1	3,8	9	14,5	1	1,3
Շեմիրանաթ	6	23,1	3	4,8	2	2,6
Թեհրան	0	0	33	53,2	66	86,8
Ֆիրուզքուհ	1	3,8	2	3,2	0	0
Դամավանդ	13	50	3	4,8	2	2,6
ընդամենը	26	100	62	100	76	100

Նահանգում որոշ մարդածին գրավչություններ, որոնք ունեն միջազգային ու ազգային գործունեության նշանակություն, խիստ կախվածություն ունեն բնական պայմաններից: Դրանցից են, օրինակ, Դիզինի և Շեմշակի դահուկորդման խաղահարթակները, ինչպես նաև Շեմիրանաթում և Աբալիում գտնվող դահուկավարման այլ խաղահարթակները, որոնք գտնվում են Դամավանդ վարչական շրջանում: Հարկ է նկատել, որ այս խմբի մարդածին գրավչությունների կախվածությունը տարածքի բնական ու կլիմայական պայմաններից, ստեղծում են բավարար նախադրյալներ նշված շրջաններում էկոզբոսաշրջության և բնաշրջության ներուժի մեծացման համար, մյուս կողմից՝ նպաստում է Թեհրան քաղաքում կենտրոնացած զբոսաշրջային պահանջարկն այլ շրջաններում և տարածքներում վերաբաշխելու գործընթացին:

Քննարկելով նահանգում զբոսաշրջային բնական գրավչությունների օգտագործման հարցը, կարելի է եզրակացնել, որ անհրաժեշտ է մշակել և իրականացնել հիմնավորված քաղաքականություն՝ նահանգի բնաշրջային ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու համար: Դրանց օգտագործումը պետք է զուգակցվի համապատասխան ենթակառուցվածքի ստեղծմամբ և նահանգի վարչական շրջանների սոցիալ-տնտեսական զարգացմամբ:

Թեհրանի նահանգի մշակութային գրավչությունները կազմում են զբոսաշրջային ընդհանուր գրավչությունների 28%-ը: Այդ գրավչություններից նրանք, որոնք նյութական տեսքով են կայացել, իրեղեն են կամ տեղակայված են երկրի վրա, բոլորն էլ ենթարկվել են երկրի պատմական զարգացման գործընթացի ազդեցությանը: Մյուսները, որոնք վերացական են, համարվում են հասարակական զարգացումների արդյունք և նահանգի պատմական ինքնատիպության ձևավորմամբ ու անցյալի փորձությունների դարբնոցում ձեռք են բերել հատուկ տեսք և բովանդակություն: Այդպիսիք են նահանգի բնակչու-

թյան ամենակարևոր սովորույթներն ու ժողովրդական ավանդույթները: Պետք է խոստովանել, որ վստահության և կառավարման բացթողումների պատճառով այս անշոշափելի գրավչությունների խումբը, հասարակական վերաբերմունքի ազդեցության տակ՝ ձգտելով արևմտյան ձևով արդիականացման, հայտնվել են ոչնչացման և անհետացման եզրին:

Ուսումնասիրվող տարածքում գտնվող գրավչությունների կեսից ավելին (53,2%-ը), որոնք դասվում են մշակութայինների շարքին, տեղակայված են Թեհրան քաղաքում: Թեհրանին հաջորդում է Վարամինը (14,5%): Թեհրանի նահանգի մյուս քաղաքներից յուրաքանչյուրում տեղակայված են մշակութային գրավչությունների 10%-ից ոչ ավելին, այս քաղաքների մրցունակությունը զբոսաշրջային գրավչությունների առումով Թեհրան քաղաքի հետ շատ թույլ է:

Մշակութային գրավչությունների նմանատիպ կենտրոնացման պատճառներից մեկը պատմական վերջին շրջանում Իրանի զարգացման մեջ Թեհրանի առանձնահատուկ դերն է: Այս քաղաքը դարձնելով մայրաքաղաք, Ղաջարյան տոհմի Աղա-Մուհամմադ խանը սկսեց Իրանի նոր պատմության շրջանը, որը շարունակվում է առ այսօր: Սակայն, քաղաքում ստեղծված պատմամշակութային շատ այլ արժեքներ, ինչպես, օրինակ, մինչ Ղաջարի տոհմի և անգամ մինչիսլամական ժամանակաշրջանին պատկանող Ռեյ և Վարամին քաղաքները, քայքայվել են ժամանակի կործանարար ազդեցությունից՝ կորցնելով իրենց պատմահասարակական մրցակցության ունակությունը:

Նահանգի մարդածին գրավչությունները, որոնք առավելապես կենտրոնացված են Թեհրան քաղաքում և այնպիսի պատկերավոր տեսքեր ունեն, ինչպես, օրինակ դահուկավարման խաղահարթակները (Թեհրան քաղաքում դրանք չկան), կինոդահլիճները, թատրոնները, մշակույթի տները, մարզադաշտերը, անգամ հիվանդանոցները, ինչպես նաև վարչակառավարական և առևտրային կենտրոնները, զբոսաշրջիկների ուշադրությունն են գրավում երկրի տարբեր կետերից և այլ երկրներից: Նահանգում զբոսաշրջային մարդածին գրավչությունների խիստ կենտրոնացման պատճառներից մեկն էլ Թեհրան քաղաքում ծառայողական-հանգստյան իրավիճակի հիմնախնդիրն է, և քաղաքական, տնտեսական ու վարչական հաստատությունների խիստ կենտրոնացվածությունը: Բացի դրանցից, Թեհրանը որպես մայրաքաղաք մեծ դեր ունի երկրի ներսում տարանցիկ զբոսաշրջային երթուղիների ձևավորման գործընթացում և զբոսաշրջիկների բաշխման հարցերում:

Սովորաբար մարդածին գրավչություններն իրենց հասանելի լինելու և իրական գործունեության շնորհիվ բազմաթիվ կողմնակիցներ ունեն զբոսաշրջիկների շրջանում: Զբոսաշրջիկները, որոնք նահանգ են գալիս Իրանի համեմատաբար թույլ զարգացած վայրերից, մարդածին կառույցների և գրավչությունների նկատմամբ այնպիսի հակում են ցուցաբերում, որը երբեմն հասնում է սիրահարության: Փոխարենը, զարգացած վայրերից և երկրներից մուտք գործող զբոսաշրջիկները բացի մարդածիններից՝ հակված են այցելել նահանգի պատմամշակութային և բնական գրավչությունները:

Մարդածին գրավչությունների միջոցով զբոսաշրջության զարգացման առավելությունը, համեմատաբար սահմանափակ տարածքի և քիչ ժամանակի պահանջն է: Թեհրան քաղաքից դուրս, նահանգի այլ քաղաքներում մարդածին գրավչությունների հիմնավորված և մտածված ձևով տեղաբաշխմամբ, հնարավոր է մեծացնել այդ բնակավայրերի զբոսաշրջային արժեքը, հետևաբար նաև՝ պահանջարկը, որի արդյունքում կարելի է ձևավորել ներգնա զբոսաշրջության ներքին ուղղություններ:

Այսպիսով, Թեհրանի նահանգի այլ քաղաքներից դեպի Թեհրան զբոսաշրջային այցելության պահանջարկի նվազեցմամբ և նահանգի այլ քաղաքներում մարդածին գրավչությունների պահանջարկի ավելացմամբ, բացի այդ քաղաքներում զբոսաշրջիկների թվաքանակն ավելանալուց, կպակասի նաև Թեհրան քաղաքի բնական և հասարակական միջավայրի վրա մարդու ներգործության չափը և հիմնակառույցներում ֆիզիկական մաշվածության ծավալը: Դա կնվազեցնի նաև Թեհրանի մթնոլորտային ավազանի աղտոտվածության աստիճանը և էական դեր կունենա քաղաքի մթնոլորտային ավազանի պահպանման հիմնախնդրի լուծման գործում: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ մարդածին զբոսաշրջային գրավչությունների օգտագործման կայացումը, ելնելով նահանգի տարածքում նոր գրավչությունների ստեղծման և բաշխման իրողությունից, կարիք ունի մտածված ծրագրավորման և մարդկային և ֆինանսական համապատասխան ռեսուրսների:

Նահանգի մակարդակով զբոսաշրջային գրավչությունների վերլուծությունը և արժևորումը, զբոսաշրջության զարգացման ծրագրավորման հնարավորություն է ստեղծում, որը հենվելով միջավայրի որակի պահպանման վրա առաջ է բերում կայուն զբոսաշրջության զարգացման գաղափարը: Վերջինս ենթադրում է հաշվի առնելով առկա զբոսաշրջային և ռեկրեացիոն-ռեսուրսային ներուժն, դրանց նկատմամբ ժամանակակից պահանջարկը, մշակել ճիշտ ռազմավարություն զբոսաշրջային ինդուստրիայի զարգացման ոլորտում: Հանդիսանալով տնտեսության արագ զարգացող և հեռանկարային ճյուղ, զբոսաշրջությունը նահանգում և նրա վարչական միավորներում պետք է կատարելագործել և նոր ուղղություն հաղորդել դրան: Զբոսաշրջային ներուժի առկայությամբ պայմանավորված՝ կարելի է խրախուսել ֆինանսական ներդրումները, ինչը կունենա զբոսաշրջության ինդուստրիայի կայացման, ամրապնդման և հետագա զարգացման միտում և կապահովի ներդրված ֆինանսական միջոցների արագ վերադարձ, որը հատկանշական է զբոսաշրջության ինդուստրիայի համար: Սա էլ կխթանի այդ շրջանների տնտեսության վերելքն և զարգացումը:

Ամփոփելով և ընդհանրացնելով կատարված վերլուծության արդյունքները կարող ենք եզրակացնել, որ Թեհրանի նահանգի վարչական շրջանները և մի շարք քաղաքներ, ունեն մեծ հնարավորություններ՝ համապատասխան ռեսուրսներ և զբոսաշրջային գրավչություններ, զբոսաշրջության տարբեր տեսակների և ուղղությունների զարգացման և զբոսաշրջային շուկայի ընդլայնման և բազմազանացման համար: Դրանցում առկա զբոսաշրջային գրավչությունները և ենթակառուցվածքը հիմք են տալիս զբոսաշրջային հենակետային տարածքների և դեստինացիաների ձևավորման ու զարգացման համար:

Ստացվել է՝ 20.01.2015

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Դինդարի Ա.** Քաղաքային զբոսաշրջությունը Իրանում և աշխարհում (երկրորդ հրատ.): Մաշհադ, 2010 (պարսկերեն):
2. **Зорин И.В., Квартальнов В.А.** Энциклопедия туризма. М., 2003.
3. Թեհրան նահանգի զբոսաշրջության զարգացման համալիր ծրագիր: Թեհրան նահանգի զբոսաշրջության, ձեռքի աշխատանքների և մշակութային ժառանգության կազմակերպություն, 2005 (պարսկերեն):
4. www.amar.org.ir Իրանի վիճակագրության կենտրոնի ինտերնետային կայք:

А. А. ПОДОСЯН, ХОССЕИН Э. КИАСАРИ

ОПОРНЫЕ ТЕРРИТОРИИ И РЕСУРСЫ РАЗВИТИЯ ТУРИЗМА В ПРОВИНЦИИ ТЕГЕРАН (ИРИ)

Резюме

В статье проанализированы природные, культурно-исторические и антропогенные туристские объекты провинции Тегеран с позиции их распределения и степени использования в туризме. Описана роль туристских ресурсов провинции в образовании и развитии опорных туристских территорий и дестенаций.

A. H. POTOSYAN, HOSSEIN E. KIASARI

BASIC TERRITORIES AND RESOURCES OF TOURISM DEVELOPMENT IN TEHRAN PROVINCE OF IRAN

Summary

In the article natural, historical-cultural and human-made tourist attractions of Tehran province have been analyzed for tourist usage and distribution. The role of tourist resources for forming and developing of basic tourist territories and destinations is given.